ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓԲԸ

REPUBLIC OF ARMENIA
SHIRAK"S REGION
GYUMRI MEDICAL CENTER
CJSC

Հայաստանի Հանրապետություն
Գյումրի, Գ.Նժդեհի փ., 3/3
Էլ/հասցե՝ gyumrimc@gmail.com
Հեռ. - (0312) 3-03-11

Republic of Armenia
Gyumri st.G.Nzhdeh 3/3
E-mail: gyumrimc@gmail.com
Phone: (0312) 3-03-11

N 1319 «06» նոյեմբեր 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԳԲԿ-ԳՀԱՇՁԲ-24/2» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին (հասցե՝ ՀՀ ք. Երևան Մեծարենց փողոց 23/2 բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, Հ/Հ՝ 2470085614550000, ՀՎՀՀ՝ 01329544, հեռ.՝ 091 50 08 04) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-Ի ՏԵ-ից դեպի մանկական հիվանդանոցին սնուցող օդամալուխային գծի անցկացման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԲԿ-ԳՀԱՇՁԲ-24/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, արդյունքում կողմերի միջև 26.09.2024թ կնքվել է «ԳԲԿ-ԳՀԱՇՁԲ-24/2-1» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Սույն թվականի հոկտեմբերի 3-ին «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին (adgroupprocurement@gmail.com) ուղարկվել է համաձայնագիր (որի ստացումը հաստատվել է կատարողի կողմից)՝ համաձայն ԳԲԿ-ԳՀԱՇՁԲ-24/2-1 պայմանագրի 8.15 կետի, առ այն որ հատկացվել են ֆինանասական միջոցներ: Մինչև սույն թվականի հոկտեմբերի 24-ը Կատարողի կողմից չի ստորագրվել և չի հաստատվել համաձայնագիրը: Առաջնորդվելով պայմանագրի 8.15 կետով՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով

պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը:

2024 թվականի հոկտեմբերի 25-ին «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն պաշտոնապես ծանուցվել է Պայմանագրի միակողմանի լուծման մասին: Պաշտոնապես ծանուցվելուց հետո «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն մինչև նոյեմբերի 5-ը ներառյալ չի վճարել որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Ուսումնասիրելով ներկայացված հիմքերը, արձանագրում եմ, որ «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն թույլ է տվել օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ին ներառել նշված ցուցակում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.10.2024թ. ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.procurement.am (www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում:

Հարգանքներով՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ – ի

տնօրեն՝ Ա. Իսահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓԲԸ

REPUBLIC OF ARMENIA
SHIRAK"S REGION
GYUMRI MEDICAL CENTER
CJSC

Հայաստանի Հանրապետություն
Գյումրի, Գ.Նժդեհի փ., 3/3
Էլ/հասցե՝ gyumrimc@gmail.com
Հեռ. - (0312) 3-03-11

Republic of Armenia
Gyumri st.G.Nzhdeh 3/3
E-mail: gyumrimc@gmail.com
Phone: (0312) 3-03-11

N 1269 «25» հոկտեմբեր 2024թ.

«ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ տնօրեն
Ա. Ավագյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի տիկին Ավագյան

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ 26.09.2024 թվականին կնքել է ԳԲԿ-ԳՀԱՇՁԲ-24/2-1 ծածկագրով աշխատանքների կատարման պայմանագիր:

Սույն թվականի հոկտեմբերի 3-ին «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին (adgroupprocurement@gmail.com) ուղարկվել է համաձայնագիր (որի ստացումը հաստատվել է կատարողի կողմից)՝ համաձայն ԳԲԿ-ԳՀԱՇՁԲ-24/2-1 պայմանագրի 8.15 կետի, առ այն որ հատկացվել են ֆինանասական միջոցներ: Մինչև սույն թվականի հոկտեմբերի 24-ը Կատարողի կողմից չի ստորագրվել և չի հաստատվել համաձայնագիրը: Առաջնորդվելով պայմանագրի 8.15 կետով՝ «*Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները:* Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից **տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը**:

Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է» և հաշվի առնելով այն փաստը , որ Պայմանագրի շրջանակներում ամբողջությամբ չի կատարվել աշխատանքները ՝ ***«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է 26.09.2024 թվականի «ԷՅ ԴԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ –ի հետ կնքված ԳԲԿ-ԳՀԱՇՁԲ-24/2-1 պայմանագիրն ամբողջությամբ:***

Հիմք ընդունելով 2017թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Ռ. Իսահակյան